քերում պակաս չէր, քան ֆաշկէրինը և վնաս էր պատճառում մարդկանց։ Այսպիսի մարդկանց մեջ կային առհասարակ շար աչք ունեցողներ, որոնք ինչի էլ նայեին՝ լինի իր, անասուն, մարդ, որևէ վնասում պիտի պատահեր նրան՝ կոտորվելը, գողացվելը, ապականվելը, տկարությունը, հիվանդությունը և այլն։ Սակայն և ամեն մարդու պատահական հայացքը կարող էր նույն շար հետևանքն ունենալ, մանավանդ գովքը, որն անբաժան է գոված իրի կամ անձի նկատմամբ ծագող նախանձից։ Գովքը շաղկապվում էր անգիտակցական նախանձի, շար զգացմունքի հետ և իսկույն վնասաբեր ազդեցություն էր գործում։ Այս զորությունը կապ չուներ ֆաշկէրին հատկացվող զորության հետ։ Աչք տալ մեկ մարդ կարող էր մյուսին պատահաբար, առանց շարություն պատճառելու դիտավորության, առանց իսկապես տածած նախանձի կամ թշնամության[123]։

Շար աչքից զերծ պահելու համար հայերը Զանգեզուրում էլ, որպես և այլ հայաբնակ գավառներում, դիմում էին մի քանի տեսակ հմայիլների։ Այդ հմայիլների մի մասը շինվում էին բոշնի[124] փայտից, որին վերագրվում էր հատկապես շար աչքից պաշտպանվելու զորություն։ Բոշնուց էին շինվում մանուկների կրծքի վրա կարվող զարդերը, տան պատից կախվող զանազան ձևի իրեր և մանավանդ անասունի՝ կովերի, եզների, գոմեշների պարանոցին կախվող դաղդղանները, որոնց Զանգեզուրումն էլ, որպես նաև այլ հայաբնակ շրջաններում սովորաբար տրվում էր մահիկի ձև։ Այս փայտին վերագրվող զորության մասին գյուղերում պատմում էին, որ մի օր հայր և որդի գնալիս լորու-ն եղել մի ճամփով և նկատել են, որ դաշտում հանգստանում են մի զույգ լծված եզներ։ Հայրը բացականչում է՝

«Էս ի՞նչ լավ եզներ են»։

Սակայն իսկույն հիշում է, որ իր աչքը միշտ վատ է ազդում և զարմանում է, թե ինչպե՞ս է, որ իր ակամա բացականչությունը վատ հետևանք չունեցավ։ Նա վազում է դեպի եզները։ Պարզվում է, որ լուծը բոշնի փայտից էր շինված եղել։

Շար աչքի դեմ Զանգեզուրում, ինչպես և Հարևան Ղարաբաղում, շատ տարածված էին աչֆանուլունքները—փոքրիկ սև կամ խիստ մուգ գույնի գնդիկ-հանուլունքներ, երբեմն խորանարդիկներ, նախշված կամ կետ-կետ փորագրված սպիտակ աչքերով, որոնցից և ստացել են իրենց անունը։ Դժվար է առայժմ բացատրել, թե ինչո՞ւ է այս սև ֆոնի վրա նախշած սպիտակ կետերին տրվում այդ զորությունը։ Արդյո՞ք նայողի ուշադրությունը գրավելու և իրենց վրա նրա հայացքի շար հետևանքները ընդունելու կամ նրան նայողին պատժելու համար, կամ նրա հայացքը կոտորակելու, փշրելու, ցրիվ տալու համար... թե՞ այլ պատճառով։ Այդ աչիշ հանուլունքները կախում էին և՛ օրորոցից, և՛ երեխայի զգեստի վրա, կարած՝ շարում էին հարսանեկան վարագույրի վերին եզրին, թելի վրա շարած՝ հագնում էին ձեռքին՝ ապարանջանի պես, կախում էին երբեմն նաև անասունի վզին դաղդղանի փոխարեն։ Շար աչք ունեցողների հայացքը շեղելու համար, տան առջև, այգու մեջ մի ցցի վրա կամ առհասարակ երևացող տեղում, կամ տրոնա կելխին՝ դռան գլխին՝ պա-

---

[123] Նախանձ չշարժելու դիտավորությամբ պետք է մասամբ բացատրել նաև մանուկների, ոչխարի, անասունի, մեղվի, գույքի, շերամի, կալի խուրձերի թիվը կամ քանակը ուրիշին հայտնելու վախը։ Համբարքի վախը կարող էր և ուրիշ ցանկությունից բխել, որ ֆաշկէրը չլսե՝ ու նախանձից չվնասեն։

[124] Viburnum opulus—калина, каркас.